600.0438.20.11.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 նոյեմբերի 2019 թվականի №438Ա

քաղ. Երևան

«ՀՈՒՅՍԻ ՔԱՐԱՎԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ №9/1-91 ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի №221Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ «ՀՈՒՅՍԻ ՔԱՐԱՎԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2005 թվականի փետրվարի 15-ին «ՀՈՒՅՍԻ ՔԱՐԱՎԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է №9/1-91 թույլտվությունը, որի գործողության ժամկետը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2010 թվականի մայիսի 5-ի №221Ա որոշմամբ երկարաձգվել և շարադրվել է նոր խմբագրությամբ (ռադիոհաճախականության օգտագործման №0790 թույլտվություն),

բ) Ընկերությունը պատշաճ կարգով չի կատարել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17.1 հոդվածով սահմանված ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների և ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժի վճարման պարտավորությունը,

գ) Հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 20-ի №405Ա որոշմամբ Ընկերությունը պարտավորեցվել է մինչև 2017 թվականի սեպտեմբերի 20-ը ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով հաշվարկված 237 450

(երկու հարյուր երեսունյոթ հազար չորս հարյուր հիսուն) դրամ պարտքը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

դ) Հանձնաժողովի 2018 թվականի հունիսի 20-ի №252Ա որոշմամբ Ընկերությունը պարտավորեցվել է 2017 թվականի սեպտեմբերի 21-ից մինչև 2018 թվականի հունիսի 20-ը ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով հաշվարկված 204 675 (երկու հարյուր չորս հազար վեց հարյուր յոթանասունհինգ) դրամ պարտքը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

ե) Ընկերությունը 2019 թվականի հոկտեմբերի 31-ի գրությամբ դիմել է Հանձնաժողով՝ Ընկերությանը տրամադրված ռադիոհաճախականության օգտագործման №0790 թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու խնդրանքով,

զ) Ընկերության՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով պարտավորությունը 2018 թվականի հունիսի 21-ից մինչև 2019 թվականի հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար կազմել է 411 255 (չորս հարյուր տասնմեկ հազար երկու հարյուր հիսունհինգ) դրամ, և

հիմք ընդունելով Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, 17.1 հոդվածը, «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 37-րդ հոդվածը, Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել՝
   1) «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2005 թվականի փետրվարի 15-ին Ընկերությանը տրամադրված ռադիոէլեկտրոնային միջոցների տեղադրման համար ռադիոհաճախականությունների հատկացման №9/1-91 թույլտվությունը,
   2) Հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 5-ի «ՀՈՒՅՍԻ ՔԱՐԱՎԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված №9/1-91 թույլտվության գործողության ժամկետը երկարաձգելու մասին» №221Ա որոշումը:
2. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում №900005281812 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցել ռադիոհաճախականության օգտագործման վճարի մասով 2018 թվականի հունիսի 21-ից մինչև 2019 թվականի հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար հաշվարկված 411 255 (չորս հարյուր տասնմեկ հազար երկու հարյուր

հիսունհինգ) դրամ պարտքը, որից 316 304 (երեք հարյուր տասնվեց հազար երեք հարյուր չորս) դրամը ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարն է, իսկ 94 951 (իննսունչորս հազար ինը հարյուր հիսունմեկ) դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը:

3. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է.
   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու այն.
   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք.Երևան
20 նոյեմբերի 2019թ.